ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/83» ԾԱԾԿԱԳՐՈՎԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 19-ը սեպտեմբերի 2017թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ուխտյան,
Բացակայում է՝ ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժանմունքի պետ, մայոր Ե. Ալեքսանյանը
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Տ.Բաղդասարյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Տ. Բաղդասարյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Տ. Բաղդասարյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/83» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին **մասնակիցների** համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «ՄԷՍ-ՏԵՔՍ» ՍՊԸ և «ՏԻՍԱ» ՓԲԸ որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում բացակայում են ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում հրավերող նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող պատվիրատուի կողմից չափսերի քանակները տրամադրման պայմանը:«Սպորտ Սիթի» ՍՊԸ ներկայացված 7-րդ, 8-րդ, 9-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերող նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող էսքիզները, որոնց համաձայն պետք է լինի ներկայացվող ապրանքների արտաքին տեսքը, ինչպես նաև վերոնշյալ չափաբաժիններով ներկայացված ապրանքների բնութագրերից անհրաժեշտ է հանել էսքիզներին վերաբերվող «կամ համարժեք» բառերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները: Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամատասխանությունները և ներկայացված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատվեցին հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան):

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի 14.09.2017թ. թիվ 425/ԴՎԱ հրամանով Գնահատող հանձնաժողովի նախագահ է նշանակվել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյանը:

1.2 26.09.2017թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **մասնակիցների** որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/83» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Տ. Բաղդասարյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Տ. Բաղդասարյան